



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Հաստատվել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 07.05.2020

թվականի թիվ 20-05-06-02 որոշմամբ

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Ուսանողների առցանց ատեստավորման ժամանակավոր կանոնակարգով» սահմանվում են Համալսարանի ուսանողների առցանց ատեստավորման ժամանակավոր կանոնները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, այլ իրավական ակտեր: Սույն կանոնակարգով սահմանվում են սովորողների ատեստավորման առանձնահատկություններ, հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Պարետի 03.05.2020 թվականի թիվ 63 որոշումը և արտակարգ դրության հետ կապված այլ իրավական ակտեր:

3. Մույն կանոնակարգի նպատակն ընթացիկ ատեստավորումների միջոցով ուսանողների գիտելիքների ստուգումն է:

2. ԱՌԱՋԻՆԻՑ ԵՐՐՈՐԴ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄԸ

Ատեստավորումների ձևը և ժամանակացույցը

1. Համալսարանի առաջինից երրորդ կուրսերում 2020 թվականի 2-րդ կիսամյակի բոլոր քննական և տարբերակիչ ստուգարքային առարկաների ատեստավորման ձևը առցանց է, ուղիղ կապի միջոցով՝ որպես ստուգարքային առարկա:

2. Համալսարանի կողմից սահմանված ստուգարքային և տարբերակված ստուգարքային առարկաների ստուգարքի ձևով առցանց ատեստավորման ժամկետ է սահմանվում՝ 18.05.2020 թվականից 27.05.2020 թվականը ընկած ժամանակահատվածը՝ տվյալ առարկայի վերջին դասի ընթացքում:

3. Համալսարանի կողմից սահմանված քննական առարկաների ատեստավորումը փոխարինվում է ատեստավորման ստուգարքի առցանց ձևի, որի ժամկետ է սահմանվում՝ 01.06.2020 թվականից 15.06.2020 թվականը ընկած ժամանակահատվածը:

4. Մարման շրջանները կկազմակերպվեն հետևյալ ժամանակահատվածում՝

– 1-ին մարում՝ 17.06.2020 թվականից 30.06.2020 թվականը ընկած ժամանակահատվածը՝ ատեստավորման առցանց ձևով,

– 2-րդ մարում՝ 01.09.2020 թվականից 18.09.2020 թվականը ընկած ժամանակահատվածը՝ համաճարակային իրավիճակով պայամանավորված որոշմամբ՝ բանավոր կամ առցանց:

5. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող առարկայական պարտքեր ունեցող և մայիս ամսվա վերահանձնմանը մասնակցելու դիմում ներկայացրած ուսանողների վերահանձնումը համաճարակային իրավիճակով պայամանավորված մայիս ամսվա փոխարեն կկազմակերպվի 25.08.2020 թվականից 31.08.2020 թվականը ընկած ժամանակահատվածում համակարգչային (անգլալեզու ուսանողների համար՝ գրավոր) եղանակով:

6. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող առարկայական պարտքեր ունեցող ուսանողները 25.08.2020 թվականից 31.08.2020 թվականը ընկած ժամանակահատվածում վերահանձմանը մասնակցելու համար (ովքեր մայիս ամսվա համար դիմում չեն ներկայացրել) դիմումները կարող են ներկայացնել 22.06.2020 թվականից 03.07.2020 թվականը ընկած ժամանակահատվածում:

7. Առարկայական տարբերություններ և ակադեմիական պարտքեր ունեցողները (կցագրված անձինք) կատեստավորվեն առցանց ստուգարքի ձևով հետևյալ ժամանակահատվածներում՝

– առարկայական տարբերությունները և ստուգարքային առարկաներից ակադեմիական պարտքերը կատեստավորվեն 18.05.2020 թվականից 27.05.2020 թվականը ընկած ժամանակահատվածում,

– քննական առարկաներից ակադեմիական պարտքերը ստուգարքի ձևով կատեստավորվեն 01.06.2020 թվականից 15.06.2020 թվականը ընկած ժամանակահատվածում:

Ատեստավորումների ընթացակարգ

8. Առաջինից երրորդ կուրսերի 2020 թվականի 2-րդ կիսամյակի բոլոր առարկաները կատեստավորվեն առցանց ստուգարքի ձևով՝ պարտադիր տեսաձայնագրմամբ:

9. Քննությունների պատշաճ կազմակերպման պատասխանատվությունը կրում է ամբիոնի վարիչը: Ամբիոնի վարիչը բոլոր խմբերի ատեստավորման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ատեստավորման օրը ներկայցնում է համապատասխան ֆակուլտետի համապատասխան փոխդեկանին: Քննությունների ընթացքը վերահսկվում է համապատասխան ֆակուլտետի դեկանատի կողմից:

10. Առցանց դասերի 70 տոկոսի մասնակցության դեպքում ուսանողները կատեստավորվեն վերը սահմանված քննաշրջանում և ստուգարքային շրջանում տվյալ խմբի դասախոսի կողմից առցանց իրականացվող հարց ու պատասխանի դրական արդյունքի հիման վրա:

Հակահամաճարակային միջոցառումներին կամավորական աշխատանքներ իրականացնող ուսանողների դեպքում, համապատասխան փաստաթղթերի առկայության

պարագայում, սույն կետի 70 տոկոսի պայմանը գործում է 60 տոկոսի մասնակցություն ապահովելու դեպքում:

Առցանց դասերի մինչև 70 տոկոսի մասնակցության դեպքում ուսանողը չի թույլատրվում քննաշրջանին և կարող է մասնակցել 1-ին մարման շրջանին:

Հասարակագիտական առարկաների, հայոց և օտար լեզուների առցանց դասերի 70 տոկոսին մասնակցությունը և մեկ դրական պատասխանի առկայությունը համարվում է ստուգարք ստանալու պայման:

Առցանց դասընթացների մինչև 70 տոկոսի մասնակցության դեպքում ուսանողը ստուգարքը կարող է ստանալ մարման շրջաններում:

Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված ուսանողները կատեստավորվեն համապատասխան ժամանակահատվածներում կուրսի ատեստավորման սկզբունքներով՝ օգտագործելով քնությունները հանձնելու իրենց վերապահված բոլոր հնարավորությունները:

11. 2019-2020 ուստարվա վճարովի և անվճար տեղերի միջև փոխատեղման մրցույթն ամփոփվելու է՝ հիմք ընդունելով առաջին կիսամյակի ատեստավորումների տվյալները:

3. ՈՉ ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՑԻԿԼԱՅԻՆ ՁԵՎԱԶՍՓՈՎ ՍՈՎՈՐՈՂ ԿՈՒՐՍԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

Ատեստավորումների ժամանակացույց

1. Ոչ ավարտական, ցիկլային ձևաչափով սովորող կուրսերում 2020 թվականի 2-րդ կիսամյակի բոլոր քննական առարկաները կատեստավորվեն առցանց, որպես ստուգարք՝ տվյալ առարկայի վերջին դասին:

2. Մարման շրջանները կկազմակերպվեն հետևյալ ժամանակահատվածում՝

- 1-ին մարում՝ 20.06-30.06.20թ. ժամանակահատվածում՝ առցանց,
- 2-րդ մարում՝ 01.09.2020 թվականից 18.09.2020 թվականը ընկած ժամանակահատվածում՝ համաճարակային իրավիճակով պայամանավորված՝ բանավոր կամ առցանց:

3. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող առարկայական պարտքեր ունեցող և մայիս ամսվա վերահանձնմանը մասնակցելու դիմում ներկայացրած ուսանողների

վերահանձնումը համաճարակային իրավիճակով պայմանավորված մայիս ամսվա փոխարեն կկազմակերպվեն 25.08.2020 թվականից 31.08.2020 թվականը ընկած ժամանակահատվածում համակարգչային (անգլալեզու ուսանողների համար՝ գրավոր) եղանակով: Եթե ավարտական կուրսին նախորդող կուրսի ուսանողներն ունեն առավելագույնը 12 կրեդիտ կազմող առարկաների վերահանձնման 2 հնարավորություն, ապա դրանցից մեկը կհանձնեն վերը նշված ժամանակահատվածում, իսկ երկրորդը՝ 07.09.2020 թվականից 18.09.2020 թվականը ընկած ժամանակահատվածում:

4. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող առարկայական պարտքեր ունեցող ուսանողները օգոստոս ամսվա վերահանձմանը մասնակցելու համար (ովքեր մայիս ամսվա համար դիմում չեն ներկայացրել) դիմումները կարող են ներկայացնել 22.06.2020 թվականից 03.07.2020 թվականը ընկած ժամանակահատվածում:

5. Առարկայական տարբերություններ և ակադեմիական պարտքեր (կցագրված անձիք) ունեցողները կատեստավորվեն առցանց ստուգարքի ձևով հետևյալ ժամանակահատվածներում՝

Տեսական առարկաների դեպքում՝

– առարկայական տարբերությունները և ստուգարքային առարկաներից ակադեմիական պարտքերը կատեստավորվեն 18.05.2020 թվականից 27.05.2020 թվականը ընկած ժամանակահատվածում,

– քննական առարկաներից ակադեմիական պարտքերը ստուգարքի ձևով կատեստավորվեն 01.06.2020 թվականից 15.06.2020 թվականը ընկած ժամանակահատվածում:

Ցիկլային ձևաչափով ուսումնառվող առարկաների դեպքում ուսանողը կատեստավորվի տվյալ առարկայի վերջին դասի օրը:

Ատեստավորումների ընթացակարգ

6. Ոչ ավարտական ցիկլային ձևաչափով սովորող կուրսերի 2020 թվականի 2-րդ կիսամյակի բոլոր առարկաները կատեստավորվեն առցանց ստուգարքի ձևով՝ պարտադիր տեսաձայնագրմամբ:

7. Քննությունների պատշաճ կազմակերպման պատասխանատվությունը կրում է ամբիոնի վարիչը: Ամբիոնի վարիչը բոլոր խմբերի ատեստավորման արդյունքների

վերաբերյալ տեղեկատվությունը նույն օրը պետք է ներկայացնի համապատասխան ֆակուլտետի փոխդեկանին: Քննությունների ընթացքը վերահսկվելու է դեկանատի կողմից:

8. Առցանց դասերի 70 տոկոսին մասնակցած ուսանողները, ովքեր 5-ից բարձր գնահատական ստանալու նախընտրությամբ չեն մասնակցել վերջին դասի ընթացքում դասախոսի կողմից իրականացված հարց ու պատասխանին («5» գնահատական ստանալու համար), կարող են մասնակցել համապատասխան առարկաների առցանց ստուգարքին՝ կիսամյակի ընթացքում դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցով: Առարկաների տեղեկագրերում «5» գնահատական ստացած ուսանողի դիմաց կնշանակվի «ստուգված»:

Առցանց դասերին մինչև 70 տոկոս մասնակցության դեպքում, ուսանողին չի թույլատրվում հանձնել ցիկլի ավարտին, նա կարող է մասնակցել 1-ին մարման շրջանին:

Հակահամաճարակային միջոցառումներին կամավորական աշխատանքներ իրականացնող ուսանողների դեպքում, համապատասխան փաստաթղթերի առկայության պարագայում, սույն կետի 70 տոկոսի պայմանը գործում է 60 տոկոսի մասնակցություն ապահովելու դեպքում:

9. 02.03.2020 թվականից 13.03.2020 թվականը ընկած ժամանակահատվածում ուսումնառած, սակայն չատեստավորված առարկաների ատեստավորումները կկազմակերպվեն առցանց ստուգարքի ձևով՝ կիսամյակի ընթացքում դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցով:

10. Այն ուսանողները, ովքեր փետրվարի 3-ից մինչև մարտի 14-ը բացակայել են տարբեր առարկաների ցիկլային առկա ձևաչափով ընթացած պարապմունքներից, առանց բացակաները լրացնելու կմասնակցեն մարումներին: Իսկ բաց թողած պարապմունքները լրացնել ցանկացողները կարող են դեկանին ուղղված առցանց դիմում ներկայացնել՝ ընթացիկ կիսամյակին զուգահեռ, հակառակ հերթով, առցանց եղանակով դրանք լրացնելու համար, որից հետո մասնակցել մարումներին:

11. 2020 թվականի փետրվարի 3-ից մինչև մարտի 14-ը ցիկլային ձևաչափով դասավանդվող առարկաների քննություններից անբավարար գնահատական ստացած ուսանողները այդ քննությունները կարող են վերահանձնել նշված մարումներին՝ նշված ձևաչափով:

12. 2019-2020 ուստարվա վճարովի և անվճար տեղերի միջև փոխատեղման մրցույթն ամփոփվելու է՝ հիմք ընդունելով առաջին կիսամյակի ատեստավորումների տվյալները: